10984

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

« 02 » 08 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 0111-22

Ձեռնարկողը՝ ***«Երևաննախագիծ» ՓԲԸ***
ք.Երևան, Փ.Բյուզանդ 1/3

Գործունեությունը՝ ***Ավան վարչական շրջանի բուսաբանական այգու տարածքում անտառապուրակի կառուցապատման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
ք.Երևան, Ավան վարչական շրջան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0111-22

<02> 08 2022թ.

«Երևաննախագիծ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված, Երևանի բուսաբանական այգու տարածքում անտառպուրակի կառուցապատման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Երևաննախագիծ» ՓԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ք. Երևան, Ավան վարչական շրջան

Ներածական մաս Գործունեության նպատակն է իրականացնել Երևանի բուսաբանական այգու տարածքում անտառպուրակի կառուցապատման աշխատանքներ:

Անտառպուրակի աշխատանքների նախագծային համար հիմք է հանդիսացել պատվիրատուի հայտը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N416873 վկայականը, Երևանի քաղաքապետարանի կողմից 2021 թվականի դեկտեմբերի 22-ին տրված՝ ծրագրի իրականացման վերաբերյալ համաձայնությունը: Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բուսաբանական այգի կազմակերպելու, գրանցված իրավունքի տեսակը՝ մշտական օգտագործման, հողատարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 79.2 հա:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին 7-րդ կետի ա ենթակետի նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում: Հետազոտվող տարածքը գտնվում է Երևան քաղաքի Ավան վարչական շրջանում, Ուսումնասիրվող տարածքն աղքատ է գրունտային ջրերից: Կլիման արտահայտված ցամաքային է՝ շոգ և չոր ամառներով, չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռներով:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ЭКСПЕРТИЗНЫЙ ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS
ՀՀ ԵՐԵՎԱՆ ՀՀ ЕРЕВАН RA YEREVAN

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը՝ բաց շագանակագույն, կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային և պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած հողեր:

Տարածքում վտանգավոր երևույթներն ինչպիսիք են կարստը, սողանքը, փլուզումը և այլն՝ տարածքում բացակայում են:

Երևանի բուսաբանական այգին ինքնատիպ ազգային արժեք ներկայացնող գիտական, էկոկրթական հաստատություն է, որն ունի ավելի քան 80-ամյա պատմություն: Բուսաբանական այգին իր գիտական գործունեությամբ, բուսական հավաքածուների կազմով ու բնույթով ունի միջազգային մեծ ճանաչում և համարվում է տարածաշրջանի առաջատար գիտական հաստատություններից մեկը: Այգին համագործակցում է նաև աշխարհի շուրջ 400 բուսաբանական գիտական հաստատությունների հետ: Կառուցապատման ենթակա տարածքում պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները բացակյում են:

Հիմնական ծառուղին սկսում է բուսաբանական այգու Ծարավ Աղբյուրի փողոցի մուտքից և տանում է մինչև զբոսապուրակի շրջանաձև խաչմերուկ: Հիմնական ֆունկցիոնալ բնութագիրն ապահովում է այցելուների և բուսաբանության ինստիտուտի աշխատակիցների հիմնական հաղորդակցությունը, որը ենթադրում է ճարտարապետական կերպարի որոշակի հանդիսավորություն և զսպվածություն:

Զբոսապուրակը հանդիսանում է հանգստի, զբոսանքի և ճեմելու հիմնական միջավայրը: Ունի լայն հնարավորություններ այցելուների տեղավորման, ինչպես նաև հանդիսությունների, ցուցադրությունների, փառատոների կազմակերպման համար: Յուրաքանչյուր գոտին, կախված ֆունկցիոնալ նշանակությունից, առանձնանում է իր բնույթով, ճարտարապետական կերպարով և միջավայրի ձևավորմամբ:

Նախատեսվում է կարճաժամկետ հանգստի գոտիներ, ճեմուղիների շրջադարձներում նախատեսված են առանձին հատվածներ, որոնք պետք է օգտագործվեն հուշապուրակի այցելուների և առանձնապես երեխաների կարճատև հանգստի համար: Ճեմուղիները ներառում են այգու ներքին նիշից մինչև հուշահարթակ բարձրացող պարուրաձև հետիոտնային ուղիները: Արահետները, ճեմուղիները միացնող հետիոտնային կարճ ուղիներ են սալահատակ ծածկույթով: Ազատ հանգստի գոտու ծածկույթն՝ ավազե է:

Համաձայն գնահատման հայտի Երևանի բուսաբանական այգու տարածքում անտառպուրակի կառուցապատման աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ քանդման աշխատանքները՝

- մետաղական ցանկապատով քարե պարիսպների քանդում՝ 925.0մ
- ե/բետոնե ջրավազանի քանդում՝ R=6.5մ, H=1.6մ,
- ասֆալտապատ ճանապարհների քանդում՝ 18280.0քմ,
- բազալտե աստիճանների ապամոնտաժում՝ 560.0գծ մ,
- բուտաբետոնե հիմնատակի քանդում՝ 220.0խմ:

Կառուցապատման տարածքում բուսահողի ընդհանուր ծավալը 2163.0 խմ է, ինչը նախատեսվում է պահեստավորել տեղում և օգտագործել հուշապուրակի բուսաշերտի առավել նվազ հզորությամբ տարածքներում:

Համաձայն հայտի՝ Պուրակում նախատեսվում է կառուցել նոր արհեստական լճակ, այցելուների ակտիվ հանգստի համար, որի ջրային մակերեսը 4620.0քմ է: Բլուրի ամենաբարձր մակարդակում լինելու է հուշահարթակ: Հուշահարթակում նախատեսվում է

կառուցել զոհված ազատամարտիկներին նվիրված հուշակոթող: Հուշահարթակի չափերը 36x18 մետր՝ կոմպոզիցիոն առումով 2 քառակուսի, որից մեկի կենտրոնում կխոյանա կոթողը, նվազագույնը 12.0 մետր բարձրությամբ: Լինելու են նաև կարճաժամկետ հանգստի գոտիներ, որոնք պետք է օգտագործվեն հուշապուրակի այցելուների և առանձնապես երեխաների կարճատև հանգստի համար: Յուրաքանչյուր գոտին, կախված ֆունկցիոնալ նշանակությունից, առանձնանում է իր բնութագրով, ճարտարապետական կերպարով և միջավայրի ձևավորմամբ:

Հուշապուրակի նախագծային տարածքում բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար տեղաշարժման մատչելիությունն ապահովելու ուղղությամբ նախատեսվել են.

ա. հասարակական զուգարաններ թիկնաթոռ-սայլակով տեղաշարժվող հաշմանդամություն ունեցող անձանց համար,

բ. ծառուղիները, ճեմուղիները հարմարեցված են հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժ խմբերի համար, մշակվել է շարժման երթուղի,

գ. նախատեսված են շինարարական նորմերով սահմանված համապատասխան տեղեր հաշմանդամություն ունեցող անձանց ավտոմեքենաների կանգնատեղերի համար,

դ. հուշահարթակի հասանելիությունը թիկնաթոռ-սայլակով այցելուների համար ապահովված է թեքահարթակների համալիրով:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում: Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմանների բնորոշ ծառաթփային բուսականությամբ: Ագրոտեխնիկական միջոցառումների ավարտից հետո տարածքում ծառատունկն իրականացվելու է ուշ աշնանը կամ վաղ գարնանը: Տարածքում պահպանվելու են միայն ասեղնատերևավորների տարբեր տեսակները՝ Կենսածառ, Սոճու, Գիհու տեսակներ՝ մոտ 10-15 ծառ և մի քանի վերը թվարկված կենսունակ բացառիկ չորադիմացկուն թփեր և ծառատեսակներ մոտ 10 ծառ և 20 թուփ:

Նախատեսվող շինարարական աշխատանքները ենթադրում են հողային աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 3000մ³ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ և 1000 մ³ հետլիցք: Ավելցուկային 2000մ³ ծավալով հողային զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր:

Շինարարական աղբն ամբողջությամ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Ոռոգման ցանցը նախատեսվել է ժամանակակից տարբերակով՝ ելնելով ջրի և էլեկտրաէներգիայի խնայողության նպատակներից: Ջրի խնայողության համար նախատեսվել է ոռոգման սպրինկլերային ժամանակակից համակարգ, իսկ էլեկտրաէներգիայի խնայողության համար այդ համակարգը բաժանվել է երկու մասի՝ պոմպերով և ինքնահոս:

Ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացներն իրականացվում են գործող շինարարական նորմերի ու կանոնների և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված ՏԵ/16695 տեխնիկական պայմանի համաձայն, Ավան վարչական շրջան բուսաբանական այգու շուրջ 20 հա հատվածի ջրամատակարարումը իրականացվելու է նշված հատվածով անցնող 46500մմ և d=300մմ ջրագծերը շրջանցելուց հետո շրջանցվող 4-600մմ ջրագծից, կոյուղին միացվելու է

Աճառյան փողոցով անցնող d=500մմ կոյուղատարին, իսկ հեղեղատարը՝ Աճառյան փողոցով անցնող d=700մմ հեղեղատարին:

Համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի նախատեսվող գործունեության տարածքի էլեկտրամատակարարումն իրականացվելու է կառուցապատողի կողմից կառուցելով համապատասխան հզորության ենթակայան:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կկրեն ժամանակավոր բնույթ՝ մինչև շինարարության ավարտը: Համաձայն Հայտի՝ նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են հայտի միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում, այդ թվում՝

- կառուցապատման ենթակա տարածքի ցանկապատում,
- շինությունների ծածկում անթափանց թաղանթով, համապատսխան բարձրության,
- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում ջրցանի կատարում,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը իրականցնել փակ ծածկով մեքենաներով.
- իրականացնել շինտեխնիկայի անվադողերի լվացում շինհրապարակից դուրս գալուց առաջ,
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելելու է փոշու տարածումը,
- կանաչապատ տարածքների ոռոգումը կիրականացվի կաթիլային համակարգի ներդրմամբ,
- շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա,
- շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, տարածքներում պետք է ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ,
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինաղբից,
- աղմկահարույց աշխատանքներն հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին,
- բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով,
- շինարարական աղբը պատշաճ կերպով հավաքվել և հեռացվնել արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից
- վտանգավոր արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը :

Կառուցապատման ընթացքում իրականացվող հիմնական բնապահպանական միջոցառումների գումարային արժեքը նախատեսվում է 350.000 ՀՀ դրամ և ամբողջ շինարարության ընթացքում 500.000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Ամփոփելով Հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են անտառպուրակի աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևան քաղաքի Ավան վարչական շրջանում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ «Արտակարգ իրավիճակների», «Առողջապահության», «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի», «Կադաստրի կոմիտեից», «Ավան վարչական շրջանից», ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել «Հայտի» լրամշակումներում:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների և մնացորդային գրունտի հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
2. Աշխատանքների ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:
3. Շինարարության ընթացքում որպես պարտադիր պահանջներ, անհրաժեշտ է՝
   - շինհրապարակի արտաքին տարածքը սահմանազատել ժամանակավոր ցանկապատով, անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ,
   - շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով,
   - շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
   - բետոնի տեղափոխումն իրականացնել Հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
4. ՀՀ կառավարության 2002 թ. ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Երևաննախագիծ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված, Երևանի բուսաբանական այգու տարածքում անտառպուրակի կառուցապատման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
առաջին կարգի մասնագետ՝ Նելլի Մովսիսյան

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ЦЕНТР ОКРУЖАЮЩЕЙ СРЕДЫ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS